ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԴՈԿՏՈՐ ԱՐԹՈՒՐ ՌԵՄԶԻԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՆՏԲԵՐԻԻ ՄԵՋ

Երեքշաբթի, 1961 Հունիս 27-ին, հետամիջօրեի ժամը 2.30-ին, Քենտրբերիի աթոռանիստ Մայր Տաճարին մեջ, տեղի ունեցավ համայն Անգլիո Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ դոկտ. Արթուր Մայքլ Ռեմզիի գահակալության հաղիսավոր արարողությունը, ի ներկայության քրիստոնյա բարձրաստիճան հոգևորականներու, պետական բարձր անձնավորությանց և բազմահազար հավատացյալներու։

Բացի Անգլիկան Եկեղեցվո ներքին թեմական եպիսկոպոսներեն, թվով ավելի քան հիսուն, փութացած էին նաև Երուսաղեմի արքեպիսկոպոսը, Նյու-Յորքի, Բոստոնի, Հորդանանի և Սուդանի եպիսկոպոսները։ Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարքությունը կներկայացներ Թիվադիրի միտրոպոլիտը, Աղեքսանդրիո Հույն Պատրիարքությունը՝ Կարկեդոնի եպիսկոպոսը, Ռումանիո Եկեղեցին՝ Մոլդավիո արքեպիսկոպոսը, Մոսկվայի Պատրիարքությունը՝ Բողոյսկի արքեպիսկոպոսը, Հունաստանի ուղղափառ Եկեղեցին՝ Հոդոսի եպիսկոպոսը։ Անտիոքի Պատրիարքությունն ու Բուլղարիո Եկեղեցին ևս ունեին իրենց պաշտոնական ներկայացուցիչները։

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կներկայացներ Անգլիո հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը, որ եպիսկոպոսական զգեստավորումով ներկա եղավ օրվան արարողության, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Զավեն վարդապետ Արզումանյանի։

Առավոտյան ժամը 11.30-ին, հրավիրյալները հատուկ շոգեկառքով մը մեկնեցան Լոնդոնեն դեպի Քենտրբերի և հետամիջօրեի ժամը 1.30-ին առաջնորդվեցան տեղվույն աթոռանիստ Մայր Տաճարը։ Ուրախություն էր տեսնել «տիեզերական» խումբը եկեղեցականներու, եկած տարբեր ազգություններեն, տարբեր եկեղեցիներեն և տարբեր հարանվանություններեն և հավաքված Քրիստոսի Եկեղեցվո միության մեջ. բոլորն ալ հրճվանքով հանդիսավոր այս օրվան մեջ անդամ մը ևս պիտի հաստատեին Քրիստոնյա Եկեղեցվո միության կարիքը, մասամբ ցրված և մեծ մասամբ կորսված իր անդամներուն միջև։ 1205-են ի վեր 750 տարվան պատմություն ունեցող Գահին վրա եկած էր բազմելու Քենտրբերիի 100-րդ գահակալը, 56-ամյա Արքեպիսկոպոս Արթուր Մայքլ Ռեմզի, իր պաշտոնի միտրոպոլտական իրավունքներով և իշխանությամբ։

Հունիսի 29-ին Քենտրբերիի Արքեպիսկոպոսին և իր տիկնոջ կողմե ընդունելություն տարբվեցավ ի պատիվ հրավիրյալ օտար եկեղեցականներուն, անգլիկան թեմական եպիսկոպոսներուն և պետական անձանց։ Հետամիջօրեին, Լամբեթի ընդարձակ պարտեզներուն մեջ, ներկաներ պատվվեցան թեյով, իսկ երեկոյան ալ հյուրասարահին մեջ՝ ընթրիքով։ Պատվասիրության ընթացքին դոկտ. Մայքլ Ռեմզի խոսք առնելով շնորհակալություն հայտնեց ներկա օտար Եկեղեցիներու ներկայացուցիչներուն։ Ապա անդրադարձավ իր նախորդին՝ դոկտ. Ֆիշերի կատարած ձեռներեց գործունեության և մաղթեց, որ միության քայլը, որ առնված էր անոր կատարած վերջին այցելություններով, դառնա հուսալից և արդյունավոր։

Այս հյուրասիրությանց ընթացքին, հետաքրքրական էր տեսնել ներկայությունը Լիվերպուլի հռոմեական կաթոլիկ եպիսկոպոսին։ Պատվասիրվողներուն մեջ, հանուն Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ներկա էր գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս, որուն կընկերանար Տ. Զավեն վարդապետ։